ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2018 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը «**ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/41**»

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «հակահրդեհային գույքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված « ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/41» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 18.04.2018թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 19.04.2018թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1՝

Հարգելի գործընկեր.
Խնդրում եմ տալ պարզաբանում-շտկում.

Չափաբաժին 2
Հրշեջ կացին - գծային չափերը և քաշը ուղղել.
Քաշը 1.2+/- 0,2 կգ, երկարությունը 420 +/- 30մմ, սրածայր մասը 130 +/- 10 մմ: Ինչպես նաև ինչպես հասկանալ սայրի բարձրությունը - 0,07 մմ:

Չափաբաժին 4
Փողակ ուղղել՝ երկարությունը 300 +/- 60մմ: Միթե այդ փողակի համար ԳՈՍՏ-ն ու ՏՈՒ-ն կարևոր են, արդյոք դրանք այսօր գործում են ՌԴ-ում, եթե մատակարարեն փողակ այլ՝ նոր ԳՈՍՏ-ով ու ՏՈՒ-ով, ինչ է որակական հատկանիշները վատն են լինելու:

Չափաբաժին 5
Հրշեջ ճնշման փողրակ ուղղել՝ երկարությունը 20 +/- 1մ: Միթե այդ փողրակի համար ԳՈՍՏ-ն ու ՏՈՒ-ն կարևոր են, արդյոք դրանք այսօր գործում են ՌԴ-ում, եթե մատակարարեն փողրակ այլ՝ նոր ԳՈՍՏ-ով ու ՏՈՒ-ով, ինչ է որակական հատկանիշները վատն են լինելու և վերջապես, այդքա՞ն էական է -60oC մինչև +40oC աշխատանքային ջերմաստիճանային պայմանները:

Հարգանքով՝

Պարզաբանում N 1՝

Պարզաբանումը կցվում է:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել « ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/41» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գ. Տերյանին

Հեռախոս՝* 010-29-44-18*:
էլեկտրանային փոստ՝ g.teryan@mil.am:

« ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/41» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

19.04.2018թ

ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ

Ես որպես ԲՄԱՊՁԲ-7/41 մրցույթի հայտի նախագծող, տալիս եմ այն պարզաբանումը, որ «չափաբաժին 2»-ում նշված հրշեջ կացինի «սայրի բարձրությունը - 0,07 մմ» հատվածում տեղի է ունեցել վրիպակ, այն անհրաժեշտ է դիտարկել - «սայրի հաստությունը - 0,07+/-0,03 մմ», քանի որ հրշեջ կացինը նախատեսված է հրդեհի կամ այլ փրկարարական գործողությունների ժամանակ ջարդման աշխատանքներ կատարելու համար:

«Չափաբաժին 4»-ում նշված D-51 մմ փողակ-ի տեխնիկական բնութագրում նշված ԳՈՍՏ-ը և ՏՈՒ-ն գործում են, հնարավոր է նյութական միջոցը դիտարկել ԳՈՍՏ-ով և ՏՈՒ-ով համապատասխանաբար: Փողակի տվյալները պետք է համապատասխանի ԳՈՍՏ-ին կամ ՏՈՒ-ին: Համապատասխանության անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ առկա հակահրդեհային այն գույքը, որի հետ օգտագործվելու է փողակը, պետք է համապատասխանի համատեղ օգտագործվող առկա փողրակներին՝ միացման հատվածներում (ըստ չափի և համատեղ շահագործման ժամկետի) և շահագործման չափորոշիչներով (փողակով և փողրակով անցնող նյութի ՄՊա ճնշման համապատասխանությամբ):

«Չափաբաժին 5»-ում նշված ռեդինեփողրակի տեխնիկական բնութագրում նշված ԳՈՍՏ-ը և ՏՈՒ-ն գործում են, հնարավոր է նյութական միջոցը դիտարկել ԳՈՍՏ-ով և ՏՈՒ-ով համապատասխանաբար: Փողրակի տվյալները պետք է համապատասխանի ԳՈՍՏ-ին կամ ՏՈՒ-ին:

ԳՈՍՏ-ով ներկայացված -60 C-ից մինչև +40 C աշխատանքային ջերմաստիճանային պայմանները հնարավոր է փոփոխել՝ -40 C-ից մինչև +40 C, հաշվի առնելով փողրակի շահագործման տարածաշրջանի մեղմ բնակլիմայական պայմանները: Փողրակի մյուս տեխնիկական հատկանիշները՝ համապատասխան ԳՈՍՏ-ի և ՏՈՒ-ի: Համապատասխանության անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ առկա հակահրդեհային այն գույքը, որի հետ օգտագործվելու է փողրակը, պետք է համապատասխանի համատեղ օգտագործվող առկա հակահրդեհային գույքին և տեխնիկային՝ միացման հատվածներում և շահագործման չափորոշիչներով:

ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

փոխգնդապետ Ս. ՄԱՉՄԱՆՅԱՆ